

ՊՐՈՖԵՍՈՐ
ԲԺՇԿԱԳԵՏ Գ. ՄԵԼՔՈՒԹԵԱՆ

№ 28

ՎԵՆԵՐԱԿԱՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ

Եհ

ՆՐԱՆՑ ԴԵՍ ԿՈՒԵԼՈՒ
ՀԱՆՐԱՄԱՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Թեհրանի Մեծն Յըխտանիայի հիւպասոսարանի
տոռղջառպահական, մասի կառավարիչ
կօլօնել ֆարուզիի

և

Թեհրանի համոլուարանի տեսուչ, պրոֆ. Ամիր
Ալամի յառաջաբաններով:

Տարբան ։ ՄՌԴԵՐՆԵՐ, ԹԵՀՐԱՆ

1943 թ.



Հ Յ Ա Վ Ա Ր Ա Ջ Ո Ւ Թ Ա Ր
Ա Մ Ա Վ Ա Ր Ա Ջ Ո Ւ Թ Ա Ր
Ա Վ Ա Ր Ա Ջ Ո Ւ Թ Ա Ր



ՊՐՈՅԵՍՈՐ ԲԺՇԿԱԳԵՏ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ
ՎԿԱՑԵԱԼ ԲԵՐԼԻՆԻ ՀԱՐԱԿՑՈՒՐԱՆԻՑ ԵՒ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ
ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՑԻՑԻՑ,

ՅԱՌԱՋԱԲԱՆ Ա

Պրոֆեսոր բժշկապետ Գ. Մեհրաբեանը Մոսկ-
ւայի համալսարանի նախկին պրոֆեսորներից է,
մօտ տասն և հինգ տարի է որ իրանում աշխա-
տանք է տանում և ահա տարիներ է որ իրանցի
է համարւում:

Մինչ այս բազմաթիւ գրւածքներ է լոյս
ընծայել զանազան հիւանդութիւնների մասին:
Ուստի, իբրև գնահատանք նրա ծառայութիւն-
ների, իրանի կրթական նախարարութեան կող-
մից նա արժանացել է գիտական պատւանշանի:

Վերջերս յարգելի պրոֆեսորը տւել է մի
շատ օգտակար գրւածք վեներական ախտերի
վերաբերեալ և այդտեղ մասնանշել է այդ հի-
ւանդութիւնների վնասները և մանրամասն բա-
ցաւրել է օրւայ նրանց ամենաթարմ բուժման
հիմունքները:

Այսօր մեր հինաւուրց իրանը Նորին Կայ-
սերական Մեծութեան Արքայի հովանաւորու-
թեան ներքոյ, վերսկսել է իր երիտասարդու-
թիւնը և հոկայ քայլերով սրբնթաց առաջանում
է վերելքի յառաջադիմական ուղին, ուստի ա-
մեն մի իրանցի անհատի պարտքն է, աշխատել
օգտակար լինելու, որչափ որ իր պաշարը եւ
գիտութիւնը կարող է ներել:

Ահա պրոֆեսոր Մեհրաբեանը, այս պարտա-
կանութեան հողի վրայ, ձեռնարկել է իրատա-

բակել մի շարք բժշկական օգտակար գրւածք-
ներ, Ես անձամբ գնահատում եմ նրա բոլոր աշ-
խատանքները, շնորհաւորում եմ իրան այդ բո-
լոր յաջող և օգտակար գրւածքների համար,
յայտնելով իմ շնորհակալութիւններս։ Վստահ
եմ որ նրա աշխատանքների ընթերցողները, նը-
մանապէս պիտի գնահատեն նրա մեծ գործը և
իրան երախտագէտ լինեն։

Պրոֆ. Ամիր Ալամ

Թեհրանի Համալսարանի տեսուչ

Ու Ե ըստ պրովինցիական հակառակ այս զի՞
հզմութիւն մաքանունի հետոք ուժութեան տար-
ում ուստի Ե ըստանուն բարք և լաւագույնի
այս մատուցման և պահպանի համար այս առաջ-
անձնաց նշաններն ամուս չենք Ե ըստան

ու մասն ուստի պարունակ զի՞ զույլ
- ու պահպանութիւն պահպան մատուցման
- ու պահպանութիւն ու Ե ըստանի պարունակ մատու-
- ցման ամենա անհաջող խոնաց լավա և գուշի
- ու խոնաց մատուցման ամենա շաքերի և
- պահպան և պարունակ մատուցման ամեն
- ու պարունակ ու ու խոնաց աշխատ զախույս
- պահպան և քայլ զետէն ունեց
- ու պահպան ու զախույս զախույս ունեց
- ու պահպան և զախույս զախույս ունեց

ՎԵՆԵՐՈՎԱՆ ՀԻՒՅՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԲ

Ե Ւ

ՆՐԱՆՑ ԳԵՄ ԿՈՒԵԼՈՒ ՀԱՆՐԵՄՍՏՏԵԼԻ

ՄԻԶԱՑՆԵՐԸ

I Մաս

ՍԻՖԻԼԻՍ—SYPHILIS—LUES

Վեներական հիւանդութիւններից ամենից վտանգաւորը սիֆիլիսն է։ Նա մի կատարեալ աղէտ է մարդկութեան համար։

Այդ ախտն այլ տարափոխիկ հիւանդութիւնների նման, ունի իր յատուկ մանրէն, որ նրա ծագման պատճառն է զառնում։ Մանրէն երեան են բերել գերմանացի գիտնականներ՝ Հոգմանն ու Շառուդինը 1905 թւին։ Նա կոչում է զունատ սպիրէխոդ spirochaeta pallida, կարող է մի կէտից մի ուրիշ կէտ փոխադրւել։ Նա եւս ուրիշ մանրէների նման դիտելի է միմիայն մանրագիտակով։

Սիֆիլիսի մանրէն աճում ու զարգանում է միմիայն այդ հիւանդութեամբ վարակւած մարմնի մէջ։ Նա անկարող է երկար ապրել վերջինիս բերնի հետ շփման մէջ եղած գդալի, բաժակի, գլանիկի (ցիգարետի) վրայի

Վարակումն առաջ է գալիս երկու ձեւով.
առաջինը՝ երբ մարդն աշխարհ է գալիս առողջ,
և հետագայում՝ իր կեանքի ընթացքում վա-
րակում է։ Երկրորդ, երբ երեխան իր ծննդեան
օրից իսկ հետո է բերում հիւանդութիւնը և գա-
այն դէպքում է լինում, երբ մայրը կամ հայրն
այդ ախտին ենթակայ են լինում։

Եթէ առողջ մարդը վարակելու լինի, պի-
տի գիտենալ թէ մանրէն ինչ միջոցով է մուտք
գործել նրա յօրինւածքի մէջ։ Սովորաբար այդ
միջոցներն են — հիւանդի հետ սեռային մերձա-
ւորութիւնը, նրա հետ մի ամանից ուտելը, նրա
բերանում եղած զլանիկը ծխելը, նրա հետ համ-
բուրելը, հիւանդ երեխայի ծիծ տալը և այլն։

Պէտք է գիտենալ, որ ոչ այս կամ այն սե-
ռին պատկանելը, ոչ առողջութիւնը և ոչ էլ մի
այլ բան չեն կարող սիֆիլիսով վարակելու
արգելառիթ պատճառ լինել. բոլոր մարդիկ տրա-
մադիր են այդ ախտով վարակելու։

Ֆրանսիացի գիտնական Ռիկօրդն այդ մա-
սին ասել է — «Բոլոր մարդիկ, այսինքն — հա-
րուստ, աղքատ, ստրուկ, անգրագէտ, գիտնական,
ազնւական, իմաստուն և ընկերային այլ դասե-
րի անհատներ — անբացառաբար ենթակայ են
այդ ախտով վարակելու վտանգին»։

Իսկապէս էլ այդպէս է, տարբերութիւնը
նրանումն է միայն, որ մի կարգ մարդիկ իրենց
սեռային գործունէութեան համար որոշ կարգ
ու կանոն չունեն, իրենց սեռային կեանքը անձ-

Նական սխալ ուղիով են վարում և վերջ ի վերջոյ իրենց զժբախտացնում են:

Կան մի ուրիշ կարգի մարդիկ, որոնք իրենց տգիտութեան ու անիրազեկութեան հետեւանքով՝ այդ հիւանդութիւնից իրենց պաշտպանելու համար որևէ միջոցի չեն զիմում, իսկ այդ բանի հետեւանքը կարող է լինել այն, որ բոլորը կարող են հիւանդանալ:

Սիփիլիսի մանրէն մարդու մարմնի մէջ կարող է մուտք գործել զանազան ճանապարհներով. օրինակ՝ եթէ մանրէները մուտք են գործում մորթի վրայ գոյութիւն ունեցող աչքի համար անտեսանելի մի ամենափոքրիկ ճեղքւածքում և կամ թաղանթային մասերում, ինչպէս բերանում, նրանք վարակման պատճառ են դառնում: Այդ ձեռվ տեղի ունեցած վարակումից հիւանդը մինչև երեք շաբաթ ոչ մի հետք ու նեղութիւն չի զգում, թէև մանրէն նրա մարմնի մէջ իր գործը կատարում է: Երեք շաբաթից յետոյ մանրէի ներս մտած կէտում երեան է գալիս առաջին ախտանշանը, որ բժշկական լեզով կոչւում է «կարծր շանկը». եթէ մանրէն սեռանդամի ճանապարհով է մուտք գործել, շանկը ևս մեծ մասամբ սեռանդամի վրայ է զոյանում, բայց նա կարող է առաջ գալ նաեւ բերնի, կոկորդի ու աչքի թաղանթի, ինչպէս և շրթունքի ու մասի վրայ:

Կարծր շանկը համեմատաբար փոքրիկ ու կոր, երբեմն ձւածե, մի խոց է, որի շրջանա-

ոռւթիւնը սահմանափակ է. նրանից արցունքի նման մի պարզ ջուր է թորում և այդ պատճառով էլ «թաց խոց» է յորջորջւում: Խոցը սահմանաւորւած է, ոչ ատամնաւոր ու խեցբեկ, այլ կլոր մի գծով. խոցի տակը թարմ մսի գոյն ունի և եթէ ձեռքով շօշափելու լինենք, պարզ կերպով կզգանք նրա կարծրութիւնը, կարծես այդ խոցի մէջ մի պնդացած մարմին թագնւած լինի: Հէնց այդ պատճառով էլ նա կոչւում է «կարծր շանկը»: Եւ որովհետեւ ընդհանրապէս այդ խոցը ոչ ցաւ ունի և ոչ քոր, տգէտ ու անփորձ մարդիկ մեծ սխալ են գործում՝ ջանալով խոցը բուժել պարզ միջոցներով, օրինակ՝ օծում են քարիւղիտով և այլ զանազան տեսակի օծանելիքներով. ցանում են այլ և այլ փոշիներ, թէնթուր-ըլ-եօդ են քսում, նիթրաթ դարժանով այրում են և այն:

Սակայն այս բոլոր արտաքին բուժումներն ոչ միայն ոչնչով չեն օգնում առողջութեան, այլ և թարախ ու վատ հետեանքներ են առաջացնում և դժւարացնում են բժշկի համար ախտաճանաչութիւնը: Ուստի հէնց որ սեռանդամի վրայ ամենափոքրիկ բշտիկ երեան գայ, անյապաղ պիտի զիմել հմուտ բժշկի և նախ քան ուշադիր զննութիւնը՝ սեռային մերձաւորութիւնից խուսափել: Շրջապատողներին վարակելու վտանգին չենթարկելու համար խուսափել համբոյրից, միենոյն ամանից կերակուր ուտելուց և միենոյն բաժակից խմելուց:

Մարմնի որնէ մասում խոց առաջանալիս խոցին մօտիկ տարածութեան վրայ առաջ են գալիս հանգոյցներ, որոնք բժշկական լեզով կոչում են *ganglion lymphaticum*, աւշային գեղձեր, նրանք աստիճանաբար ուռոյցքի վերածելով՝ կարծրանում են, օրինակ՝ եթէ խոցը սեռանդամի վրայ է լինում ազդրերի, ճիչկի (*Vaîne*) աւշային գեղձերը, *ganglion inguinale*, իսկ եթէ բերնումն է լինում պարանոցի վրայ գտնուող գեղձերը, գնդակի նման պնդանում են և աստիճանաբար ուռչում են, բայց յաճախ նրանց ցաւն այնչափ թեթև է, որ հիւանդին նեղութիւն չի պատճառում։

Անտեղեակ մարդը այդ ախտանիշերի երեւան դալուն ևս նշանակութիւն չի տալիս եւ հիւանդութեան ինչ լինելուն հետամուտ չի լինում։ Այդ է պատճառը, սիֆիլիսով տառապող կանանց մեծ մասը ոչ հիւանդութեան առաջին նշանների երեալու մտնրամասնութիւններն է յիշում և ոչ էլ թւականը. այդ երեոյթը տղամարդկանց մէջ ևս աննախընթաց չէ։

Երենց առողջ լինելու մասին կասկած չունենալով նման անհատներ ենթակայ են լինում իրենց գերդաստանն աւերող ախտին. նրանք իրենց շրջապատի մարդկանց հետ կենակցելով՝ շարունակում են իրենց ընկերային կեանքը եւ այդպիսով վարակում են անմեղների մի քանակ ևս։

Իսկական վարակումից 7—8 շաբաթ և ա-

ոաջին ախտանշանների երեան գալուց մօտաւու-
քապէս մի ամիս յետոյ երբեմն-երբեմն հիւան-
դացած անհատը ենթակայ է լինում զանազան
պատահարների, ինչպէս քէֆը խառնւելը, տկա-
րութիւն, ջերմ, ոսկրների մէջ թեթև ցաւեր եւ
ինչպէս նաև զանազան բշտիկներ ձեռքի, գէմ-
քի ու մարմնի վրայ, Դրանից յետոյ սկսում է
երկրորդ շրջանը:

Այդ միջոցին է, որ ամենից շատ թիկուն-
քի, կրծքի, կողերի և ուսերի վրայ, ինչպէս և
մարմնի զանազան մասերի վրայ, դուրս են գա-
լիս բաց վարդագոյն ու մանր բծեր, սրոնց ընդ-
հանուր տեսքը մի գունաւոր բծի է նմանում:
Այդ բծերը ամենեին քոր չեն առաջացնում:

Երբեմն այդ բծերի փոխարէն կամ հէնց նը-
րանց հետ միացած ժամանակ, սովորաբար ճա-
կատի վրայ, մորթը ծածկւում է բազմաթիւ
կարմրագոյն, կլոր ու փոքրիկ պալարներով – պա-
պուլաներով:

Եթէ այդ փոքրիկ պալարները գտնուում են
սրբանի շուրջը, սեռանդամի վրայ կամ բերնի
մէջ, մասնաւորապէս բերնի երկու կողմերի խոր-
քերում, նրանք միանում են իրար և կազմում
են մի մեծ, գարշահոտ ու ժահրահոս խոց: Երկ-
րորդ շրջանում խոշոր վերքեր ստկաւ են առա-
ջանում, բայց յաճախ մազերը թափուում են:

Մորթային այս բոլոր երեսյթները շրջապա-
տողների համար վտանգաւոր են: Հետեաբար
որևէ բշտիկ դուրս գալուն պէս պէտք է բժշկի

գիմել և ոչ թէ սպասել, ինքնիրեն լաւանայ:

Վերոյիշեալ նշանները մի քանի շաբաթւայ ընթացքում անհետանում են առանց որևէ հետքի և ենթական իրեն առողջ է համարում, մինչդեռ իրօք այդպէս չէ. այդ նշանները միմիայն ժամանակաւորապէս թագնում են, որպէսզի չորս ամիս անցնելուց յետոյ՝ կրկին երեան գան:

Յաճախ նրանք երկրորդ անգամ էլ կրկին անհետանում են ու կրկին երեան են գալիս: Այդ երեսոյթը մի քանի անգամ կրկնուում է եւ ամեն անգամ այդ ախտանիշերը նախկիններից աւելի թոյլ են արտայայտում և անտեղեակ անհատի աչքին աւելի անկարեոր են համարում: Վերջին անգամը նոյնիսկ երեսոյթը պայմանաւորում է նրանով, որ պարանոցը ծածկւում է սովորակ բժերով:

Մինչեւ այդ՝ հիւանդութեան ծնունդ տւող մանրէն, իր վտանգաւոր գործունէութիւնը շարունակելով և մարմին բոլոր անդամների ու հիւսւածքների մէջ մուտք գործելով, առաջ է բերում սոկրների, երակների, արիւնատար անօթների, ուղեղի ու նրա թաղանթի, փայծաղի, աչքի և այլ մարմանամասերի հիւանդութիւններ:

Եթէ հիւանդն այդ վիճակում ևս չի սկսում բուժւել, երկուսից չորս տարւայ ընթացքում, սկսում է հիւանդութեան երրորդ շրջանը, որ սարսափելի վտանգաւոր է: Նրա ախտանիշերն են «գումա» կոչւած խիժային թարախ արտածորդ ուսույցները:

«Գումառն գնդաձեւ ու կարծը ուռոյցք է մի ընկուզաչափից մինչեւ մի ձւաչափ մեծութեամբ։ Այդ ուռոյցներն աստիճանաբար փափկում ու անհետանում, իրենց տեղը թողնելով վէրքեր, որոնք շատ դանդաղօրէն են լաւանում։ Այդ շրջանում հիւանդը գիշերները ոսկրացաւերէ է ունենում։

Սիֆիլիսի երրորդ շրջանը վարակման տեսակետից շրջապատի համար առաջին և երկրորդ շրջանի նման վտանգաւոր չէ, բայց հիւանդի համար ամենից երկիւզալին ու վտանգաւորն է։

Եթէ «գումառն միմիայն մորթի վերաբերմամբ է մասաբեր լինում կամ քիթն է ամբողջովին անհետացնում կամ քիմքն է ծակում եւ կերակրի մասերը քիմքի ծակից քթի մէջ են անցնում կամ ձայնի փոխւելու ու բռնւելու պատճառ է գառնում, կրկին շնորհակալ պիտի լինել, որովհետեւ «գումառն կարող է վերջանալ մահով։

Մեծ վտանգը կայանում է այն բանի մէջ, որ գուման հարւածում է կենսական նշանակութիւն ունեցող գործարաններից մէկն ու մէկը՝ օրինակ՝ ուղեղը, սիրտը, թոքն ու փայծաղը։ Այդ դէպքում կամ մահն է վրայ համոււմ և կամ առաջ են գալիս անբուժելի հիւանդութիւններ, ինչպէս անդամալուծութիւնը, խօսելու անկարողութիւնը, սեռային անկարողութիւնը և այլն։

Սիֆիլիսի երրորդ շրջանին ենթակայ անհատը անկարող է նոյնիսկ վտան լինել, որ մին-

չե հետևեալ օրը կարող է անվտանգ ապրել,
նա նմանում է շարունակ փոթորկի դէմ դրւած
վառող մոմի: Կանոնաւոր բժշկութիւնը միայն
կարող է նրան փրկելու վտանգից պաշտպանել:

Զբուժւած կամ թերի կերպով բուժւած սի-
ֆիլիսը այդ հետևանքներով անգամ չի բաւա-
րարում և եթէ երրորդ շրջանում միմիայն մոր-
թը, քիթը կամ մի այլ անդամն է մնաւում և
հիւանդը չի մեռնում, մի քանի տարի ապրե-
լուց յետոյ (առնւազն վարակումից 12 տարի
յետոյ), հիւանդութեան չորրորդ շրջանն է ըս-
կըսում: Այդ շրջանում ուղեղը ենթակայ է լի-
նում կաթւածի: դժբախտաբար, չնայած բժշկա-
կան գիտութեան արտակարգ առաջադիմութեան
և արւած գիւտերին, ուղեղի ճնշումից առաջա-
ցած անդամալուծութեան տեսակներն անբուժե-
լի են: Այդ շրջանի անդամալուծութիւնը, որ աս-
տիճանաբար է զարգանում և առաջադիմական
կաթւած է կոչում, խելագարութեան պատճառ
է դառնում և մի քանի տարիներ շատ ողորմելի
վիճակում հիւանդանոցի կամ գժանոցի մի ան-
կիւնում գոյութիւնը քարշ տալուց յետոյ՝ նրա
խղճալի վիճակը վերջ է գտնում:

Առաջադիմական կաթւածի դէպքում մար-
դու մտաւոր կարողութիւնները չեն անհետա-
նում, բայց ենթակայ են լինում խիստ վայրի-
վերումների, որոնք երբեմն կուրութեան և յա-
ճախ երակների աւերման պատճառ են դառնում:
Այդպիսի կացութեան մէջ մարդը դառնում է Քը ՏՈՒԹՅՈՒՆ

Հ 16775
Տ 200

616.957.2 | 5200

Մ-57 | Մէկրովյան Գ.

Կենտրոնական հիմնադրամական

Հայոց և օքանու բաշխություն...

№ 28 | | 3 դրամ

խեղճ ու անճար, որովհետև չի կարողանում նոյնիսկ իր մէզը պահել և իր սպիտակեղինն ապականում է:

Ասացինք, որ այդ հիւանդութեան ենթակայ լինելու երեսյթներից մէկն այն է, որ հիւանդ երեխայ է աշխարհ գալիս. դա կոչւում է ժառանգական սիֆիլիս, որի պատճառը հայրը կամ մայրն են լինում:

Հիւանդ մօր արեան մէջ գտնւող մանրէները մանկան պորտի երակների միջով անցնում են մանկան մարմնի մէջ ու վարակում են նըրան. Յաճախ այդ վարակումի հետևանքով երեխան մօր արգանդի մէջ մեռնում է կամ վիժում:

Յաճախ տեսնում ենք, որ կանանցից ոմանք թէկ մի քանի անգամ յղանում են, բայց կրկին երեխայ ունենալու կարօտն են քաշում, որովհետև սիֆիլիսի հետևանքով նրանց երեխաները կամ վիժում են և կամ աշխարհ գալուց յետոյ շուտով մեռնում են:

Վարակւած երեխաները մեծ մասամբ բնական ժամանակամիջոցից տուած են ծնւում, բայցի այդ՝ շատ տկարակազմ ու նիհար են լինում: Նրանցից ոմանց վրայ ախտանիշեր են նկատւում: Սակայն պատահում է նոյնպէս, որ հիւանդ մօրից բոլորովին առողջ երեխայ է ծընւում: Այդ դէպքում ախտանիշերն՝ արտայայտւում են մանկան կեանքի առաջին ամսի վերջում կամ երկրորդ ամսի սկզբում:

Պէտք է գիտենալ, որ այս բուրը երեսյթներըն առաջ են գալիս նաև այն դէպքում, եթք մանկան հայրն է հիւանդ լինում:

Մանկական սիֆիլիսի պարզորոշ ախտանիշերից մէկը սիֆիլիսային հարբուխն է, որի հետեանքով երեխան շնչելիս այնպիսի մի ձայն է հանում, որ հեռու տարածութեան վրայ լուսում է: Քիչ յետոյ նրա քթից մեծ քանակութեամբ թարախ, և երբեմն էլ արիւնախառն հոսում է առաջ գալիս: Յաճախ նրա քթի շուրջը եղող մորթը կարմրում և ճաքճքում է, քիթը բռնւում է: Եթէ այդօրինակ մանկանն չրժշկեն, կարող է մեռնել և կամ հնթակայ լինել աղէտների, ինչպէս՝ քթի ընկնելը, մազերի թափւելը, ձայնի բռնւելը և ոսկրացաւը, որ վերջանում է ձեռքի ու ոտքի կաթւածով:

Սովորաբար հիւանդ երեխայի մորթի վրայ նկատելի են լինում զանազան բշտիկներ, որոնք երբեմն փոքրիկ պղպակների են նմանում եւ ձեռքերի ափերում և կամ ներբանների տակ, շրթունքների վրայ և այլ տեղերում ուռոյցքներ են առաջանում:

Շատ ժամանակ նկատւած է, որ հիւանդ երեխաների ափի կամ կրունկի մորթին ողորկ է ու փայլուն և հետագայում ձեռնոցի նման պոկւում է: Նման երեխայի տարիքը քիչ առաջանալուց յետոյ, ուրիշ դիպւածներ են առաջ գալիս, օրինակ՝ ատամների արտասովոր աճում եւ արագ փչացում. կամ մի քանի ներքին գործա-

բանների, ինչպէս թոքերի, անկանոնութիւններ:

Այդ ժամանակից սկսած, այսինքն 4—20 տարեկան հասակում աչքերը տկարանում և փլտում են և սովորաբար յանգում է tab:s do:s ilis կամ առաջադիմական կաթւած հիւանդութեան:

Մինչև այժմ մենք համառօտակի նկարազըրեցինք սիֆիլիս հիւանդութեան ընթացքը սկսած առաջին երեան եկած փոքրիկ ու անցաւ խոցից մինչև նրա սաստկագոյն աստիճանը, այսինքն երրորդ շրջանը, ինչպէս նաև սիֆիլիսի հետեւանքները չորրորդ շրջանում, երբ նա յանգում է կատարեալ անկարողութեան, խեղճութեան ու անկարութեան:

Բայց արգեօք սիֆիլիսի վերեւում նկարազըրւած ընթացքը միշտ անխուսափելի է իհարկէ ոչ. հիւանդ մարդու ապագան ու ճակատագիրն ամբողջովին իր ձեռքին է, եթէ հիւանդը, փոխանակ կարգին ու կատարեալ բուժման սկըսելու և մինչև վերջը յարատեելու, ընդհակառակն՝ կամ բոլորովին բժշկի չի դիմում և կամ նրա հրահանգներն անուշադրութեան է մատնում, կանոնաւորապէս բժշկւելու պատրաստակամ չի լինում և ոգելից ըմպելիներ շատ է գործածում, հիւանդութիւնը շատ վտանգաւոր ընթացք է ստանում:

Իսկ եթէ հիւանդը ժամանակին բժշկի է դիմում, նրա հրահանգներն կատարեալ ուշադրութեամբ և մանրամասնութիւնները նկատի առնելով՝ կէտ առ կէտ գործադրում է, անպայ-

ման առողջանում է և երբէք վտանգաւոր հետևանքների ու անհանգութելի հիւանդութիւնների չի հանդիպում:

Այդօրինակ մարդը կատարեալ վտանգութեամբ կարող է ամուսնանալ և առողջ երեխաներ ունենալ: Երկրորդ անգամ կրկնում եմ— «Հիւանդութեան ենթակայ անհատի ապագան ու ճակատագիրը կամ այլ խօսքով՝ բախտառորութիւնն ու դժբախտութիւնը, ամբողջովին իր ձեռքութիւն է»:

Արշափ բժշկութիւնը շուտ է սկսւում, այնչափ կարճ ժամանակ է պէտք կատարեալ բըժժկութեան համար: Խոկ բժշկութիւնն սկսելու համար երբէք ուշ չէ. միմիայն անբուժելի վրտանգաւոր շրջանը—*tabes dorsalis, paralysis progressiva.*

Բժշկութեան ձևը, որ այսօր կիրառվում է, ոչ միայն հիւանդին ու նրա ժառանգներին փըրկում, այլև վերացնում է վարակման վտանգը շրջապատողների համար, որովհետեւ վարակման վտանգի ազբիւր եղող արտաքին երեսյթներն արագօրէն անէացնում է:

Սիֆիլիսի դարմանումի համար չորս կարեւոր դեղօրայք կան—մնդիկ, բիսմութ, սալւարսան և հօգ: Մնդիկն ու բիսմութը սրսկում են մկանների մէջ: Այդ դեղերի սրսկման շրջանում օրական երկու անգամ ատամները ու բերանի խոռոչը պիտի մաքրել և վատառողջ ատամները բուժել:

Սալւարստնը բազադրւել է 1909 թւականին և սրսկում է շնչերակի մէջ՝ այդպիսով նա տարածւում է արեան և նրա միջոցով ամբողջ մարմին մէջ ու բուժման գործում գլխաւոր դերն է կատարում: Թոյլ և յատկապէս սիրած թոյլ անհատներ, անկարող են նրանց համար վտանգաւոր լինել: Այդ պատճառով սալւարստն սակաւ են սրսկում և այսօրւայ բժիշկներն աւելի շուտ սօլու սալւարստն՝ լաւարստն՝ այսինքն սալւարստն, որ այլ բազմաթիւ գեղերի նման մկանների մէջ են սրսկում: Սալւարստնի այս ձեռով սրսկումը այլևս վտանգաւոր չէ և հիւանդն էլ հեշտութեամբ է դիմանում:

Իօդուր-դը-ֆօթասը գործ է ածւում բուժման կատարելուգործման, յատկապէս հիւանդութեան քրոնիկական դրութեան՝ երկրորդ, երրորդ ու չորրորդ շրջաններում, երբ ջղային համակարգութիւնն է հիւանդութեան ենթակայ:

Սիֆիլիս հիւանդութեան բուժումն անընդհատ ու յաջորդական չպիտի լինի և ունի իր շրջանները՝ իւրաքանչիւր շրջան մօտաւորապէս մի կամ մէկ ու կէս ամիս է տևում: Իւրաքանչիւր շրջանի ընթացքում հիւանդին զանազան գեղեր էլ են սրսկում և երբեմն էլ իօդուր-դը ֆօթաս ընդունել է թոյլատըում: Բուժման իւրաքանչիւր շրջանից յետոյ մէկից երեք ամիս ընդմիջում է արւում: Այդ ընդմիջումը կապ ունի հիւանդի բուժման ու նրա առողջական վի-

Ճակի հետ:

Վերեռում յիշւեց, որ ինչքան շուտ է սկըս-
ւում բուժումը, այնքան շուտ է ձեռք բերեռում
առողջութիւնը, եթէ բուժումն սկսվի հիւան-
դութեան սկզբում, այսինքն շանկը երևան գա-
լուն պէս, եօթ կամ ութ ամիս է տեսում: Եթէ
բուժումն սկսւում է բշտիկների երևան գալուց
յետոյ (երկրորդ շրջան) 2—3 տարի է տեսում,
իսկ քրոնիկական վիճակում՝ 5—7 տարի:

Բուժումը պիտի կատարւի արտակարգ ու-
շագրութեամբ ու կանոնաւորութեամբ: Հիւանդն
էլ մեծ համբերութիւն պիտի ունենայ, քանի որ
երկարատե բուժումը կարող է ձանձրալի լինել,
սակայն սիֆիլիսի ենթակայ անհատը պարտա-
ւոր է ակամայից հանդուրժել այդ բանին:

ԱՐԱԿ ԱՌՈՂՋԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՂՈՒԹԻՒ-
ՆԸ ԽԵՂՋՈՒԹԻՒՆԻՑ ԿԱՄ ՄԱՀԻԱՆԻՑ ԳԵՐԱ-
ԴԱՍՈՂ ԱՆՀԱՏԸ ՊԱՐՏԱՒՈՐ է ԿԻՐԱԾԵԼ ՀԵ-
ՏԵՒԵԱԼ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ. —

1 — Գործով զբազւելը բուժման կանոնա-
ւոր ընթացքը չի խանգարում, բայց հիւանդը
պարտաւոր է արտակարգ յոգնութիւնից խուսա-
փել, լաւագոյնն օրւայ ժամերի հետևեալ բաժա-
նումն է — ութ ժամ աշխատանք, ութ ժամ հան-
գիստ (ընթերցանութիւն, թեթև մարզանքներ,
զւարճութիւն) և ութ ժամ քուն:

2 — Ընդհանուրապէս ոչ մի տեսակի ոգելից
լրմպելի (զինի, օղի, գարեջուր) գործ չածել և
չծխել:

3 — Աղի, թթու, կծու և մեծ չափով համեմ պարունակող կերակուրներ ուտելուց խուսափելու Յատկապէս յանձնարարւում է ուտել պտուղներ, բանջարեղէն, սակայն մարսողութեան խանգարման դէպքերի մասին տեղեակ պահել բուժող բժշկին:

4 — Կերակուր ուտելուց յետոյ պարզ ջըրով բերանը լւանալ ու ողողել: Օրական երկու անգամ ատամները մաքրել և շաբաթական երկու անգամ լոգանք ընդունել:

5 — Մինչև որ բժիշկը կարականապէս չը յայտարարի հիւանդի կատարեալ առողջացումը, հիւանդը պարտաւոր է շարունակել իր բուժումը, բուժման երկրորդ շրջանի համար նշանակւած ժամին պատրաստ լինել և իր ցանկութեամբ բուժումը չընդհատել, թէ չէ կարող է հետագայում զղջալ:

6 — Բժշկի հրահանգները, որոնք արւած են հիւանդի առողջացման համար, ճշտութեամբ կատարել և նրանցից ամենաչնչինն անգամ անտես չանել:

7 — Մինչև բժշկի թոյլատութիւնը սեռային մերձաւորութիւնից խուսափել, սիֆիլիտվ հիւանդ անհատի ամուսնութիւնն առանց բժշկի թոյլատութեան, մեծ յանցանք է համարւում և արժանի է ամեն տեսակ պատժի, մինչև անգամ տարիների բանտարկութեան:

Այդ հիման վրայ է, որ վերջերս ամուսնական օրէնսդրութեան մէջ արւած բարենորու-

գութեան մէջ այդ հարցը կատարելապէս նկատի է առնւած, վարակիչ հիւանդութիւն ունենալը ծառայում է իբրև առիթ ամուսնութիւնից զըրկւելու Պարզ է, որ այս օրէնքն ինչ մեծ ազդեցութիւն ունի ներկայ և ապագայ սերունդների առողջութեան վրայ:

Այստեղ է, որ պէտք է շնորհակալ լինել Շահնշահի կառավարութեան այս միջոցառումի համար և ցնծութեամբ ու յոյսով լի սրաով այս բարեխնամ կառավարութեան յարատեութիւն ցանկալ:

8— Հիւանդը պարտաւոր է յուշագրեր ունենալ իւրաքանչիւր շրջանի բուժման սկզբի ու վերջի վերաբերմամբ, որպէսզի բուժող բժշկին փոխելու դէպքում՝ նոր բժշկին ցոյց տայ:

9— Երբէք բժշկից որևէ բան չպիտի թագցընել: Բժշկին անպատճառ պիտի յայտնել, թէ ինչպէս, երբ է վարակւել, քանի շրջան է բըժժուկւել կամ գեռ չի սկսել բուժումը: Այդ տեղեկութիւնները բժշկի համար արտակարդ ուշադրութեան արժանի են և հիւանդի ապագայի հետ սերտ կապ ունեն: Բժշկին պիտի յայտնել նոյնպէս այլ հիւանդութիւններով վարակւած լինելու մասին, նոյնիսկ այդ ախտին ենթարկւելուց տարիներ յետոյ:

10— Պէտք է առողջացման կատարեալ յոյս ունենալ և բուժումը շարունակել մինչև վերջ և երբէք չյուսահատւել, որովհետեւ առողջացումը կախւած է հիւանդի կամք ու կամեցողութիւնից,

եթէ հիւանդը բժշկի հրահանգները ճշտութեամբ
կատարում է, իր բարիքի համար է աշխատում:

Հիւանդը ՊԱՐՏԱԿՈՐ է ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ
ԶՑԱԼ ԻՐ ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻՆ ՈՒ ԻՐ ՀԵՏ ՇԲ-
ՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՍՆՀԱՑՆԵՐԻՆ ԵՒ ՆԱ ՊԱՐՏԱ-
ԿՈՐ Է ԻՐ ԿԵԱՆՔՆ ԾՅՆՊԵՍ ԴԱՍԱԿՈՐԵԼ, ՈՐ
ԻՐ ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԱԿՄԱՆ ՎՀ-
ՏԱՆԳԸ ՎԵՐԱՆԱՅ:

1— Եթէ մէկը վարակւում է ու հաստատա-
պէս կասկածում է որևէ մէկից վարակւած լի-
նելու մասին, պարտաւոր է նրան ներկայացնել
բժշկին կամ իրաւասու պաշտօնական մարմին-
ներին, որպէսզի նրան հարկադրական բուժման
ենթարկեն և այդպիսով հիւանդութեան տարած-
ման առաջն առնեն:

2— Մարմնի որևէ մասում որևէ բշտիկ կամ
վերը երեալուն պէս պէտք է անյապաղ բժշկի
դիմել և նախ քան բժշկին դիմելը վերոյիշեալ
հրահանգները կատարել:

3— Խուսափել մերձաւորութիւնից և նոյն
իսկ ամեն տեսակի շփումներից, ինչպէս, օրի-
նակ, կնոջ, երեխայ և ընտանիքի այլ անդամնե-
րի հետ մի մահճակալի վրայ պառկելուց և նը-
րանց հետ համբուրելուց:

4— Զամուսնանալ առանց բժշկի թոյլաբ-
ութեան:

5— Ընտանիքի միւս անդամների հետ կե-
րակուր չուտել միենոյն ամանից (գդալ, պնակ,
բաժակ և այլն) և միենոյն սրբիչից չօգտւել և

այլնու հիւանդի գործածութեան առարկայ եղած
բոլոր ամաններն ու իրերը պիտի ջոկ լինեն և
գործածութիւնից յետոյ տաք ջրի մէջ եռացւեն:

6 — Իր ծխած գլանիկն ոչ ոքի չտալ և ոչ
ոքի թոյլ չտալ ծխել իր գլանիկը և գլանիկի
տակն ևս մի այնպիսի տեղ նետել, որ ոչ ոք
վերցնել չկարողանայ:

7 — Հազարու ու փոնգտալու ժամանակ
թաշկինակը պահել բերնի առաջ կամ դէմքը
դարձնել ուլիշ կողմ, որտեղ ոչ ոք չկայ:

8 — Ընտանիքի անդամներից հիւանդութիւնը
չպիտի թագցնել, որովհետեւ եթէ նրանք տեղ-
եակ լինեն, թէ հիւանդի համար անհրաժեշտ
միջոցներն աւելի լաւ կդասաւորւեն և թէ հի-
ւանդը հոգեպէս ազատ կլինի և խղճի խայթից՝
զերծ, որովհետեւ զիտէ, որ այդ դէպքում ոչ ոք
չի վարակւելու:

9 — Յզութեան ժամանակ կանաք պէտք
է բժշկական քննութեան տակ լինեն և եթէ ժա-
մանակին բուժւեն, կարող են առողջ զաւակներ
աշխարհ բերել:

Ի՞նչ է Վասէրմանի բէակցիան:

Համոզւելու համար թէ տւեալ անձը առող-
ջացել է թէ ոչ՝ արեան տարրալուծութիւնն ա-
ռաջ է բերում Վասէրմանի բէակցիան: Իհարկէ
մանրադիտական այլ փորձարկութիւններ եւս
գոյութիւն ունեն:

Շատերը ենթադրում են, որ եթէ տարրա-
լուծութեան արգիւնքը բացասական է, անհատը

Արդու շնորհած բանց Ավագի քայլութեան
Դա Տէս ազատ օպերա պատճեան և ամեա:

ՊՐՈՖԵՍՈՐ

Բ ԳԵԿԱՊԵՏ Գ. ՄԵՀՐՈՒԲԵԱՆ - ից

616.957.

ՅՈ-ԽԵ-43

Մ-57

№ 28

թիւնակ:

ԱՎԱՐԱՐԱԿԱՆ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ

ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՒԵԼՈՒ
ՀԱՆՐԱՄԱՏԵԼԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

5200

Թեհրանի Մեծն Բրիտանիայի հիւպատոսարանի
առողջապահական մասի կառավարիչ
կոլօնել մարուգիի

4

Թեհրանի համալսարանի տեսուչ պրոֆ. Ամիր
Ալամի յառաջաբաններով:

A 16775

Տպարան «ՄՈՒԴԵՐՆ» , Թեհրան

1943 թ.



կատարելապէս առողջ է, իսկ եթէ դրական է, անպայմտնօրէն՝ հիւանդ։ Այդ ենթադրութիւնը սխալ է, արեան քննութեան դրական կամ բացասական լինելը միայն արժէք չունի։ Տարրալուծութեան արդիւնքն այն գէպքում է միայն արժէքաւոր, երբ հիւանդութեան բուժման ձեւին, շրջաններին ու նախընթացքին տեղեակ բըժիշկը ենթակային առողջ է գտնում։

Եղել են գէպքեր, երբ տարրալուծութեան արդիւնքը դրական է եղել, մինչդեռ աւեալ անձը կատարելապէս առողջ է եղել և ընդհակառակը՝ կարող է տարրալուծութիւնը բացասական լինել, մինչդեռ իրականում տւեալ անձը հիւանդ է, Այդ պատճառով է, որ առանց բժշկի թոյլացութեան, չպիտի բուժման վերջ տար, նոյն իսկ եթէ քննութիւնը բացասական արդիւնք է տւել։

II Մաս

ՄԻԶԿԱՏԱԳ ԿԱՄ ԶԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՏՐԻՊՊԵՐ — GONORRHOEA.

Վեներական հիւանդութիւններից միզկատապը աւելի բարդութիւններ ունեցող հիւանդութիւն է։ Նա աւելի տարածւած է քաղաքներում քան գիւղերում։

Տղամարդիկ կանանցից 2-3 անգամ աւելի են ենթակայ այս հիւանդութեան, բայց կանանց

ջերմամիզութիւնն աւելի սաստիկ է լինում և
հիւանդի համար աւելի աղետարեր հետեւանքներ
ունեցող:

Այդ հիւանդութիւնն առաջացնող մանրէն
կոչում է «Գոնոկոդ» — Neisser' ս, որ գտել է գեր-
մանացի գիտնական Նէյսերը 1878 թւին, իսկ
հիւանդութիւնը ծանօթ էր վաղեմի ժամանակ-
ներից և իր բարդութիւններն աւնէր:

Գոնոկոդն այնշափ մանր է, որ նրանց մի
միլիմետր կարելի է տեղաւորել մի սանտիմետր
տարածութեան վրայ:

Վարակումը տեղի է ունենում այն դէպ-
քում, երբ հիւանդ մարդու սեռանդամից արտա-
ծորող հոսման մէջ մեծ քանակութեածք գանը-
ւած գոնոկոդները որեէ ճանապարհով փոխանց-
ւում են առողջ մարդու հուզաթաղանթի վր-
բայ:

Այդ մանրէի աճման ու բաղմացման համար
նպաստաւոր գոտին է նաև աչքը, օրինակ՝ բը-
ժըշկական գիտաթեան տւեալներին անծանօթ
և ջերմամիզութեամբ տառապող մի յղի կնոջ
ծննդարերութիւր մի տգէտ տատմօր օգնու-
թեամբ կատուելու դէպքում՝ նորածինը կա-
րող է աչքերի բանդութեամբ վարակւել:

Պատահու է նաև, որ ծննդարերութիւնից
յետոյ տգէտ մարը իր կեղտուա մատներով ջեր-
մամիզութեան մանրէները ներժուծում է իր
կամ իր մանկա աչքերի մէջ: Յամենայն դէպտ
եթէ մանրէն մանում է աչքի մէջ, կարող է կու-

ըութիւն առաջացնել, կուրացող ծծկեր երեխաների 75%ի կուրութեան շարժառիթը ջերմամիգութիւնն է:

Սակայն սովորաբար շըջանառութեան մէջ սեռային գործարանների ջերմամիգութիւնն է:

Բայց տղամարդկանց ու կանանց հիւանդանալուց՝ յաճախ տեսնւում է փոքրահասակ երեխաների, մասնաւորապէս աղջիկ-երեխաների վարակումը. հիւանդ մայրը կամ հիւանդ դայեակը, իրենց տղիտութեան կամ անվութութեան հետևանքով, իրենց հետ միևնույն անկողնում են քննեցնում կամ կեղառու ու մանրէներով ապականւած ձեռքերով անմեղ երեխաների սեռային մասերն են լւանում և ապա չորացնում են իրենց գործածած սրբիչներով կամ թաշկինակներով: Այդպիսով նրանք վարակում են երեխաներին:

Բայց այդ հիւանդութեամբ վարակւում են մեծ մասամբ (90%) մերձաւորութեան միջոցով:

Ջերմամիգութեամբ վարակւելու վաանգից ոչ ոք զերծ չէ, ոչ բնածին, ոչ արհեստական, ոչ տարիքի հետ ունեցող անվարակութիւն գոյութիւն չունի:

Գերմանացի մի մեծ մասնագէտ իր բժըշկական գործունէութեան ընթացքում ունեցել է ծերունի հիւանդ, որ ջերմամիգութեամբ վարակւել էր 103 տարեկան հասակում: Ես ինքս բժշկել եմ երկու ծերունիների, որոնցից մէկը

75 և միւսը 83 տարեկան հասակում վարակւել էին այդ հիւանդութեամբ:

Պէտք է գիտենալ, որ վարակւած տղամարդկանց 90%ը վարակւում են հանրային կամ անծանօթ կանանց հետ մերձաւորութիւն ունենալու հետեանքով, մինչդեռ վարակւած կանանց 70%ը իրենց ամուսիններից են վարակւում: Այդ իրողութիւնը հաստատում է, թէ որ աստիճանի վտանգաւոր են պատահական ապօրինի մերձաւորութիւնները:

Միզկատապով վարակւելու համար հող պատրաստող հանգամանքները հետեեալներն են:

1 — Ցածախակի և երկարատեև մերձաւորութիւնները: Որչափ մերձաւորութիւնը երկար է տեսում, այնչափ սեռային գործարաններն աւելի են գրգռուում և իրեն արդիւնք, աւելի են թուրումներ արտադրում, եթէ գուգակցողներից մէկն ու մէկը հիւանդ է լինում, արտադրւած հոյզի մէջ աւելի խոշոր քանակութեամբ գոնոկոգներ են գտնւում:

Բացի այդ՝ որքան մերձաւորութեան գործողութիւնն երկար է տեսում, այնքան աւելի են բացւում մանրէների թագստոցները և գոնոկոգները արտախուժելով վարակման սկզբնապահառ են գառնում: Եւ եթէ գուգաւորւողներից մէկը հիւանդ է լինում, աւելի մեծ քանակութեամբ մանրէներ են գտնւում հոյզի մէջ եւ վարակման շարժառիթ են գառնում: հէնց այդ պատճառով կարող է պատահել, որ իրեն ա-

ոռղջ համարող մի կին վարակում է մի առողջ
տպամարդու և ընդհակառակը:

Սեռային գործարանների արտակարգ զոր-
ծունէութիւնը սաստիկ գրգռման պատճառ գառ-
նալով՝ գոնոկողները հուզաթաղանթի ներքե-
ւում իրենց թագնւուծ կէտերից կամ սեռանդա-
մի ներքին մասերից գուբու են զալիս՝ վարա-
կում են հոյզը:

2 — Կնոջ սեռանդամի մէջ արեան կու-
տակման դէպքում (զաշտանի, յզութեան և այլ
դէպքերի ժամանակ), որսվհետեւ այդ զրութեան
մէջ մանրէների գործունէութիւնը սաստկա-
նում է:

3 — Ոզելից խմիչքների գործածութիւնն և
հարբած զրութեան մէջ մերձաւորութիւնը, այդ
զրութեան մէջ ոզելից խմիչքից առաջացած
թունաւորումը, սերմնաթափութեան հետեանքով
կենարոնական գործարանների գործունէութիւ-
նը նւազում է, այդ պատճառով մերձաւորու-
թիւնը երկար է տևում: Բացի զրանից, ոզելից
խմիչքը՝ գրգռելով նեարդային կենարոնական
համակարգութիւնը՝ յաճախակի մերձաւորութեան
պատճառ է զառնում:

Այժմ տեսնենք թէ այս հիւանդութիւնը ա-
րացի յօրինւածքի մէջ ինչ շրջանառութիւն է
ունենում հէնց որ գոնոկողները հնարաւոր ճա-
նապարհներից մէկով ներս են մանում ու ան-
միջապէս կալչում են միզանցքի հուզաթաղան-
թին, ոկում են բազմանալ, միջից կիսւելու

ճանապարհով, վարակում են հուզաթաղանթի ամբողջ մակերեսը, աստիճանաբար մուտք են գործում թաղանթի ներքին խաւը ու բնակալում են:

Մինչև այդ, որ մօտաւորապէս 24 ժամ է տևում, հիւանդը ոչինչ չի զգում, բացի երբեմնակի թեթև քորից առնանդամի ծայրամասում. վարակումից 2—3 օր յետոյ այդ ծայրամասում այրոց է զգացում և ծայրը դիտելու միջոցին նկատում է, որ երկու շուրթերը կարմրել են ու մի քիչ ուռել, շուրթերն իրարից բաժանելու դէպքում մի կաթիլ կէս—թափանցիկ հիւթ է արտահսում:

Վարակման օրից մինչև ախտանիշերի երեւան գալը տևում է 2—3, երբեմն նոյնիսկ հինգ օր. եղել են եղակի դէպքեր, երբ այդ ժամանակամիջոցը տեել է մի շաբաթ և նոյնիսկ աւելի. Դրա պատճառը ոչ մանրէի թոյլ գործունէութիւնն է լինում և ոչ մի ուրիշ բան, այլ այն, որ սկզբում մանրէն դեռ ևս մուտք չի գործում միգանցքը, այլ նրա շուրջն է մնում և քիչ ժամանակից յետոյ է միայն ներս մըտնում:

Այսուհետեւ առաջին 4—5 օրւայ ընթացքում հիւանդութիւնն արագօրէն զտրգանում է և միգելու ժամանակ այնպէս է այրում, որ յաճախ հիւանդը հրաժարւում է միգելուց. Մասնաւորապէս գիշերները, երեւան են գալիս որոշ յուզումներ, որոնք պատճառ են դառնում շատ խիստ

ցաւերի և նոյնիսկ հիւանդին անհանգստացնում
են ու քնից արթնացնում: Այդ արտասովոր ցաւի
պատճառն այն է, որ հուզաթաղանթը չի կա-
րողանում իր բնական վիճակի մէջ մնալ, երբեմն
էլ ճեղքում և այդ դէպքում արիւնը խառնը-
ւում է թարախին, որը կարմիր գոյն է ստա-
նում: Երազափորձութեան պահին ևս սերմնահո-
սութիւնը խիստ ցաւ է պատճառում:

Ցաւագին գրգիռների ու այրոցի առաջաց-
րած գիշերային անքնութիւնը հիւանդի հոգե-
կանի վրայ վատ է ազդում, երբեմն նոյնիսկ ար-
տակարգ յոգնութեան, նւազման, գունատման ու
անտրամադրութեան շարժառիթ է ծառայում:
Զերմութեան աստիճանն ևս քիչ բարձրանում է,
բայց շատ սակաւ է 38 աստիճանից անցնում:

Առնանդամի ծայրաշուրթերի ուռոյցն աս-
տիճանաբար աւելանում է, ծայրամասի մորթն
ևս ուռչում է և երբեմն տարածում է մինչեւ
առնանդամի արմատը. հոսումն օրէցօր աւելա-
նում է և շուտով փոխարկուում է թանձր թա-
րախի, որ կանաչաւուն դեղին գոյն ունի, երբ
այդ թարախը չորանում է ներքնաշապկի ու
անդրափարակի վրայ թողնում է մի բիծ, որի
կենարոնը մուգ, իսկ շուրջն աւելի բաց գոյն
ունի:

Եթէ հիւանդը հիւանդութիւնն այդ աստի-
ճանին հասած շրջանում 3—4 բաժակի մէջ մի-
զում է, առաջին երկու բաժակներում մէզը շատ
պղտոր է լինում, իսկ վերջին բաժակներում

իր բնական գոյնն է ունենաւմ:

Երեք-չորս օրից յիտոյ թարախահոսութիւնն ընդհատում է և միմիայն մէզը բաժակի մէջ դիտելու դէպօւմ սպիտակագոյն բարակ թելիկներ ու մանրիկ կտորաանքներ են տեսնեում, սովորաբար ցաւն էլ միաժամանակ կտըւում է:

Թարախի ու ցաւերի դադարումը խեղճ հիւանդին ենթադրել է տալիս, որ առողջացել է, մինչդեռ հիւանդութիւնը շարունակում է զարգանալ:

Անխուսափելի երեսյթ չէ նաև տրամադրութեան անկումը, որ սմանց մօտ առանձնայատուկ արտայայտութիւններ է ընդունում: Մեծ մասամբ միդանցքի ծայրում և միզապարկում նախ սեղմում է զգացւում և ապա քոր ու այրոց է առաջ գալիս: Միզելու միջոցին կամ միզելուց յետոյ ցաւն աստիճանաբար ուժեղանում է այնպէս, որ հիւանդը հանգստութիւնը կորցնում է:

Արոշ հիւանդներ սերմնահոսութեան ժամանակ ասեղի ծակոցի նման ցաւեր են զգում, հիւանդի այդ վիճակում մէզը երբէք միանուազ չի արտահոսում և կամ բոլորովին կտրւում է, զուգագիպելով յատուկ ցաւերի և միզանցքի ու միզապարեի գրգռման: Միզելուց յետոյ երբեմն մի կամ մի քանի կաթիւ արխւն էլ է զալիս:

Այս վերջին հանգամանքի սկզբնաւորութիւնը յաճախ զագախ զագագիպում է մանրէի մուտք

գործելուն դէպի սաղմային պարկը, դէպի ամորձիքներն ու նրա անցքերը և դէպի տռաջազեղը, որ գտնւում է աղիքի մօտերում և բոլորում է միզուկի արմատական մասը:

Գոնոկիոդի մուտաքը առաջագեղձի—թ ostate—մէջ նրա ուռչելու և սաստիկ ցաւերի ու արտակարգ անհանգստութեան շարժառիթ է դառնում: Երբեմն նոյնիսկ հիւանդին պարտադրում է միքանի օր անկողնում մնալ:

Երբեմն առաջագեղձի վարակումն և ուռոյցքը շատ դանդաղօրէն են զարգանում և նոյնիսկ ցաւեր չեն առաջացնում, բայց այդ երեոյթը վըտանգաւոր է, որովհետեւ կարող է պատահել մանրէները երկար տարիներ այդ գեղձերի մէջ իրենց գոյսութիւնը պահպանելով ուռոյցք առաջացնեն և աղբիւր դառնան իրեն առողջ համարող անհատի կրկին անգամ վարակման:

Եթէ հիւանդ տղամարդը լրջօրէն չի բժըշկւում, յաճախ նրա ամորձիքներն ուռչում են, իսկ գա հիւանդութեան ծանր ու ցաւագին հետեանքներից մէկն է և երբեմն հիւանդին հարկադրում է անկողնի մէջ մնալ:

Եթէ երկու ամորձիքներն են ուռչում, տղամարդը անկարող է դառնում սերունդ արտադրել:

Մի քանի տարի անցնելուց յետոյ՝ միզանցքը նեղանում է և մէզը դժւարութեամբ է արտահոսում, կամ մինչեւ իսկ ընդհատում է, այնպէս որ հիւանդին փրկելու համար անդամահա-

տական գործողութեան կարիք է զգացւում:

Կանանց ջերմամիզութիւնը սովորաբար քիչ ցաւեր է պատճառում, այնպէս որ հիւանդ կինը յաճախ հիւանդանուրուց բաւական ժամանակ յետոյ է միայն զլիի ընկնում:

Կնոջ հիւանդութեան նշաններն են՝ միզելու ժամանակ այրոց, միզելու յաճախակի պահանջ թէ ցերեկւայ և թէ գիշերւայ ընթացքում ու ջերմութեան զգացում իր սեռային անցքում և մի շարք նշաններ, որոնք իգանդամի ուռչելու հետեանք են:

Երբեմն կանայք իրենց հիւանդ լինելը շեն ընդունում նոյնիսկ այն դէպքում, երբ նրանց արտահոսումը գունափոխում է և կանաչաւուն է դառնում: Այս հոսումները տարրեր ևն դաշտանի ժամանակ ունեցած հոսումներից, որ ամուսնացած կանանցից մեծ մասն ունի:

Վերջ ի վերջոյ եթէ ենթական իր հիւանդութեան հետամուտ չի լինում և առանց բժըշկութեան է թողնում, հիւանդութիւնն իր գութիւնը զգալ է տալիս աւելի վտանգաւոր հետեանքներ ունեցող ախտանիշերով:

Հաշւած է, որ կանացի բոլոր հիւանդութիւնների մօտաւորապէս մի քառորդը արդիւնք է ջերմամիզութեան, հետեառար կարելի է այդ հիւանդութիւնները ջերմամիզութեան հետեանքը եղող երեսյթներ համարել:

Նոյնպէս և ջերմամիզութեան տրիպերի հետեանք է, կանանց սեռային օրգանի ինչպէս

2800

1912

զաւակատան, ձուաների և նոյնպէս զաւակատան հետ միացնող բոլոր մասերի, ամեն տեսակ բորբոքութները:

Շատ անգամ նկատւել է, որ մի երիտասարդ, ուժեղ ու առողջ աղջիկ սեռային կենակցութիւն սկսելուց քիչ յետոյ սկսում է աստիճանաբար նիհարել, նրա կենսական ուժերը նըւազում են ու անկարող է գառնում: Այդ բոլոր իրադարձութիւնների պատճառը ջերմամիզութիւնն է, որ կարող է նոյնիսկ սերնդահատութեան շարժառիթ դառնալ: Ջերմամիզութեան հետեանք ներն երբեմն այնչափ վտանգաւոր են լինում, որ ենթակային մահւանից փրկելու համար անհըլաժեշտ է լինում ծանր ու դժւարին անդամահատութեան դիմել:

Երիտասարդ աղջիկների արտակարգ ջղայնութեան հետեանքով ջերմամիզութիւնն աւելանում է, այդ բանի նշաններն են՝ հոսում, թարախակալում, ուռոյցք, «մեծ շուրջերի» կարմրութիւն և սաստիկ ցաւեր:

Այդ ախտանիշերի վերանալուց յետոյ՝ հիւանդութեան արտաքին խստութիւնը նւազում է, բայց նա շարունակում է իր գանգաղ զարգացումը, որ երկար տարիներ շարունակելով երբեմն շատ վտանգաւոր հետեանքների առիթ է տալիս:

Թէ կանանց և թէ տղամարդկանց մօտ կարող է պատահել, որ ջերմամիզութիւնը երիկամունքի հիւանդութիւնների և յօդակապերի յօդա-

ցաւի (ջերմամիզութեան բէվմատիզմ), պատճառ դառնայ. հիւանդութիւններ, որոնք երբեմն շատ երկար ժամանակ են տևում և առաջ են բերում սասափիկ ցաւեր, որոնք նւազեցնում են մարմնական ոյժերն ու աշխատունակութիւնը, նոյն իսկ հիւանդի հանգստութիւնը խլելով՝ նրան անկողին են գցում:

Ջերմամիզութեան մանրէի միջոցով արեան ամբողջութեան ապականումը հազւադէպէ է, բայց այսու ամենայնիւ շատ ծանր հիւանդութիւն է և մահւամբ է վերջանում:

Այս բոլոր տատձներից պարզւում է, որ ջերմամիզութիւնը մարդկանց ենթագրածի նըման (ումանց կարծիքով նոյնիսկ հարբուխի նըմանող) պարզ ու անվտանգ հիւանդութիւն չէ, ընդհակառակն արտակարգօրէն լուրջ ու վտանգաւոր մի հիւանդութիւն, որ կանոնաւոր ու ճիշտ ձեռվ չբժշկւելու դէպքում անուղղելի հետեանքներ է առաջացնում:

Անմիջապէս բժշկին դիմելու կարեորութեան լաւագոյն վիաստն այն է, որ եթէ ենթական հիւանդութեան նշաններն երեալու օրն իսկ բժժշկի է գիմում և ճիշտ բժշկութիւն է սկսում, բուժումը վերջանում է 2—3 շաբաթւայ ընթացքում, եթէ մի քանի օրից յետոյ է սկսում բժշկութիւնը, հիւանդութիւնը 1—2 ամիս է տեւում, իսկ եթէ աւելի ուշ է սկսում, մանրէն մուտք է գործում միզանցքը խոր մասերը եւ կատարեալ բուժումը մի քանի ամիս է տեսում:

Սակայն յամենայն դէպս պէտք է գիտենալ,
որ ջերմամիզութիւնը բուժւող հիւանդութիւն
է, մասնաւորապէս տղամարդկանց մօտ, որոնք
կանանցից ու աղջիկներից աւելի արագ և աւել-
իկ շուտ են բժշկում կատարելապէս:

Այս հիւանդութեան վերջնական ու կտրա-
կան բուժումը պահանջում է հիւանդից համբե-
րութիւն ու հանդուրժողութիւն, իսկ բժշկից՝
երկարատե խնամք:

Իհարկէ չի կարելի այստեղ բանախօսել ջեր-
մամիզութեան բժշկելու ձեր շուրջ, որովհետև
աւելորդ է նկարագրել տեսակ տեսակ ներար-
կու մներ, լւացումներ, մարձումներ, այրումներ,
սրոկումներ, բժշկական ու ելեքտրական բազմա-
թիւ գործիքներ. բժշկութեան անժանոթ կամ
բժշկուկան ճիշտ ու կատարեալ ուսում չունեցող
մէկն անկարող է այդ միջոցներից օգտուել, մի
հիւանդապահ կամ մի բժշկի օգնական կարող է
միմիայն հոսումը կանգնեցնել կամ արտաքին
ախտանիշերը վերացնել, իսկ այնուհետեւ փոր-
ձառութիւն ու հմտութիւն ունեցող բժիշկ է
պէտք:

ԱՐԱԳ ԱՌՈՂՋԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՒԱՆԴԸ
ՊԱՐՏԱԽՈՐ է ԿԻՐԱՌԵԼ ՀԵՏԵԽԵՍԼ ՀՐԱՀԱՆԳ-
ՆԵՐԸ.—

1— Օրւայ մշտական գործունէութեան մա-
սին տեղեկացնել բժշկին, որպէսզի իւր աշխա-
տանքը շարունակելու կամ թողնելու հրահանգ
արւի:

2 — Ընդհանրապէս քանի ջերմամիզութիւնը սուր շրջանումն է, չպէտք է ցնցող փոխազըրտկան միջոցներից օգտւել, ծի ու հեծանիւնենել, մարզանքով զբաղւել ու պարել:

3 — Կերակրի մէջ քացախ, պղպեղ, մանաւնելս և այլն չլցնել և կարելի եղածի չափ շատ կաթ ու ջուր խմել:

4 — Ոչ մի տեսակի ոգելից խմիչք, նոյնիսկ փոքրիկ քանակութեամբ, գործ չածել: Օղի, գինի, գարեջուր և այլն հիւանդութեան ընթացքը վատթարացնում են և զանազան վնասակար բարդութիւնների պատճառ դառնում:

5 — Քանի բժիշկը չի թոյլատրել՝ մերձաւորութիւն չունենալ, որովհետեւ ոչ միայն հնարաւոր է այդ ազօրինի զուգակցութեամբ մի առողջ մարդ ևս հիւանդացնել, այլև հիւանդի համար էլ խիստ վանդաւոր է և ծանր հետեւանքներ են առաջ գալիս:

6 — Եթէ սեռանդամը արտակարգ ու անբընական գրգիռների յաճախակի ենթակայ է, բժշկին յայտնել:

7 — Սեռանդամը շօշափելուց անմիջապէս յետոյ՝ ձեռները խնամքով սապօնով լւանալ, թէ չէ մահրէն կարելի է աչքերին փոխանցել:

8 — Բուժման վերաբերեալ ճշտապահ լինել և բժշկի հրահանգները կէտ առ կէտ կատարել, կողմանակի մարդկանց հրահանգներին ու սրտացաւութեան ականջ չկախել, որովհետեւ այն հրահանգները, որ գիտական աղբիւրներից չեն

ծագում, կարող են աւելի ևս խստացնել հիւանդութիւնը:

9 — Եթէ հիւանդը բուժման ժամանակաշըրջանում հարկադրւած է մի այլ վայր փոխադրւել, պարտաւոր է հիւանդութեան և բուժման ընթացքի մասին մի բացարութիւն ստանալ բուժող բժշկից՝ նոր բժշկին ցոյց տալու համար:

ՎԱՐՍԿՄԱՆ ՎՏԱՆԳԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԲԻ ԱՌԱՋ ՈՒՆԵՆԱԼ ՀԵՏԵԼԵԱԼ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ .

1 — Առաջին ախտանիշերն արտայայտուելուց յետոյ պէտք է բժշկի զիմել:

2 — Առանց ամօթի և որևէ փափկանի առութեան պէտք է վարակող անձնաւորութեանը բժշկին ծանօթացնել, նրան օրինական հարկադրական բժշկութեան ենթարկելու համար:

3 — Ոչ որի հետ միենոյն անկողնում չը պառկել և երեսսրբիչն ու բաղնիքի ձեռնոցը ուրիշներից զատել:

4 — Ուրիշի միզամանից չօգտւել:

5 — Զուգակցութիւնից և մասնաւորապէս ամուսնութիւնից ձեռնպահ լինել մինչև բժշկի թոյլտութիւնը:

6 — Ախտանիշերի երեան գալուն պէս հիւանդը պարտաւոր է, եթէ տղամարդ է՝ իր կնոջ, իսկ եթէ կին է՝ իր ամուսնուն, ինչպէս նաև ընտանիքի միւս անդամներին, մասնաւորապէս աղջիկներին ու փոքր տղաներին, բժշկական ժան-

բակը կիւտ քննութեան ենթարկել տալ:

7 — Այլն իր կնոջից, կինն իր ամուսնուց, ինչպէս նաև ընտանիքի միւս անդամներից պարտաւոր են չծածկել իրենց հիւանդութիւնը:

III Մաս

ՓՍՓՈՒԿ ՇԱՆԿԻ (ULCUS MOLLE).

Վեներական հիւանդութիւններից ամենասպազզը կակուղ շանկըն է. նրա յարուցողը ստրեպտո բացին է, խմբաւորման մի մանրէ, որ գտել են 1889-ին Թիւքրէյը և այսուհետեւ Սուան մշակել է և յայտնի է Dacrey-Սուանի ստրեպտո բացիլը. վերջնականօրէն ապացուցւած է, որ այդ հիւանդութեան իսկական յարուցողն այդ մանրէն է:

Այդ հիւանդութեամբ վարակւել հնարաւոր է միմիայն նոյն հիւանդութեամբ տառապողի հետ սեռային մերձաւորութիւն ունենալով եթէ խոցի թորումը առողջ մարդու մորթին կամ հուզաթաղանթին է դիպչում, այն դէպքում է միւայն վարակում առաջ գալիս, երբ մորթի կամ հուզաթաղանթի վրայ գոյութիւն ունի որևէ փոքրիկ ճեղքաւած կամ քերթաւած, նոյնիսկ աշքի համար անտեսանելի Այլապէս վարակումը միանգամայն անհնարին է, որովհետեւ մորթի վերնախաւը կամ ըստ բժշկական յատկաբանութեան՝ փշամորթը և կամ հուզաթաղանթի մակերեսի,

պիգմենտացիայի, մանրէների համար անանցանելի պատնէշներ են ներկայացնում:

Հիւանդութեան առաջին ախտանիշը մի խոցէ, որ կարող է երեան գալ զուգակցութիւնից մի քանի ժամ յետոյց Այդ բիծը սկզբում ունենում է մուգ կարմիր գոյն, որ արագօրէն փոխարկում է դեղին գոյնի:

Երկրորդ օրը այդ կարմիր բծի մէջտեղում երեան է գալիս մի շատ փոքրիկ բարձրութիւն, որի ծայրում մի հիւթալի ու փայլուն բշտիկ է զանւում: Մի քանի ժամւայ ընթացքում բշտիկի պարունակութիւնը պղառըւում և թարախի է վերածում: Քիչ ժամանակից յետոյց բշտիկը պայթում է և թարախակաւած խոց է դառնում: Կարմիր բծի մէջտեղում զանւող այդ փոքրիկ խոցը, աստիճանաբար մեծանալով, Յ – Ք օրից յետոյց ընդունում է փափուկ շանկրի խոցի տեսքը:

Կարող է պատահել, որ խոցերի թիւը մէկից աւելի լինի, նրա մեծութիւնը սովորաբար մի սապի շափ է լինում: Նրա շրջանակը շատ անկանոն ու ատամնաւոր է: Խոցի ներքեի մասը ծածկւած է գորշ – դեղնագոյն թորւածով, և երբ ձեռքով փորձում ենք, խորքում ոչ մի կարծրութիւն կամ նոյնիսկ պնդութիւն չենք զգում:

Այդ խոցերը ցաւագին են, մանաւանդ օտար մարմինների հետ հպւելու պարագայում:

Մօտաւորապէս երեք շաբաթ շարունակ խոցը մէծանում է: Այդ շրջանից յետոյց սկսում է

լաւանալու Այդ ժամանակի խոցի խորքում երեան են զալիս հատիկներ, որոնք փոխարկվում են բնական առողջ հիւսւածների և լաւանալուց յետոյ՝ կարի տեղի նման հետքեր են թողնում։ Մի քանի օրւայ ընթացքում խոցերը մեծանում են և ճեղքի աւշային գեղձերի մէջ առաջ են բերում ուռոյցքներ (Bubo tigriensis), որոնց մեծութիւնը երբեմն ձուի չափի է հասնում։ Նըրանք մեծ մասամբ պայթում և առաջացնում են մի վերք, որ շատ գանդաղութեամբ է լաւանում։

Այդ հիւանդութեան հետեանքներից մէկն է ֆիմոզը — Phimosis, որ կայանում է հետեելում — առնանդամի ծայրամասը ծածկող մաշկը, որ իր բնական վիճակում սահուն է, կորցնում է իր այդ յատկութիւնը և այդպիսով ծայրամասը շարունակ ծածկւած է մնում, իհարկէ այն դէպքում, երբ թլպատում չի կատարւելու Դրանից առաջանում է ուռոյցք, որ հիւանդին մեծ անհանդստութիւն է պատճառում։ Դրա հետեւանքը լինում է երբեմն ֆիմոզ հիւանդութիւնը, որ կարող է այդ մաշկի փշանալու առիթ ծառայել։

Յամենայն դէպս՝ ընդհանրապէս կակուղ շանկը հիւանդի համար վտանգաւոր հետեանքներ չունի և մի կամ մէկուկէս ամսւայ ընթացքում բժշկում է։ Բայց կակուղ շանկը վտանգաւորութիւնը նրա մէջ է, որ կակուղ ու կարծր շանկը կարող են միաժամանակ իրար խառ-

Արւած լինելու

Ի՞նչպէս գիտենք կակուդ շանկը վարակումից 2—3 օր յետոյ երեան է գալիս, մինչդեռ կարծը շանկը՝ 3—4 շաբաթից յետոյ Մերձաւորութիւնից 3—4 օր յետոյ սեռանդամի վրայ եթեռում է մի խոց, որ կակուդ շանկը բոլոր նշաններն է ունենում, բայց մօտաւորապէս Յ շաբաթ անցնելուց յետոյ խոցի տակը պնդանում է և սիֆիլիսային խոցի կերպարանք է ընդունում։ Նշանակում է զուգաւորութեան ընթացքում երկու հիւանդութեան մանրէները միաժամանակ մուտք են գործել ենթակայի մարմնի մէջ։ Հետեաբար կակուդ շանկը հիւանդ անհատը պէտք է կանոնաւորապէս հետեի բըժքէի հրահանգներին և քննութեան ենթարկւին ՀԵԿ որ բժիշկը սիֆիլիսի երկիւղալի ախտանիշները նկատում է, անմիջապէս հարկ եղած միշտառումներին է զիմում։

Ի՞նչ հիւանդը պարտաւոր է շատ ման չգալ, մացմական յոգնութիւնից խուսափել և կատարեալ, ուշադրութեամբ կիրառել բժշկի պատճենները և մասնաւորապէս բուլորովին հրաժարւել սեռային յարաբերութիւնից։

Եղբեմն կարող է պատահել, որ խոցի տեսքն անպէս լինի, որ բժիշկն ևս չը կարողանար զամարոշել շանկը կակուդ կամ կարծը լինելու Այս գէպքում մանրադիտական քննութիւնները, մեծ օգնութիւն են հասցնում, որովհետեւ ապա միջացով կարելի և գտնել մանրէի

ինչ լինելը և հետեաբար ճիշտ ախտաձանաշուշթիւն կատարել:

Աւքեմն, նախ քան արեան Վասերմանեան կամ այլ բակտերիօֆիկ տարրալուծութիւնների բացասական կամ գրական արդիւնքների ըսպառելը, անհրաժեշտ է հիւանդութեան ախտաձանաշուշթիւնը կատարել մանրագիտական քըննութիւնների միջոցով և անմիջապէս սկսել բուժումը, որովհետեւ հիւանդութեան այս շրջանում բուժումը կատարւում է աւելի արագ և աւելի վստահելի կերպով: Պարզ է, որ այս մանրագիտական քննութիւնները նպաստում են կարծր ու կակուզ շանկըների պարզուշման եւ կանխում են սխալ ձեր բժշկութիւնը:

IV Մաս

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՐԳԻՇ
ԼԵԼՈՒ ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վեներական հիւանդութիւնների թւականը մարդկային հասարակութեան կազմակերպութեան թւականն է, հէնց նոյն ժամանակներում են երեան եկել:

Սակայն միջին դարերից սկսած այս հիւանդութիւններն այնչափ տարածւեցին, որ չնորոգու նման մարդկային հասարակութեան հարաց սպառապելիք վարժանական նրան վահանդին այնշտափամու

ՅԱՌԱՋԱԲԱՆ I

ՄԵԾՆ ԲՐԻՄԱՆԻ ՀԱՅԻ ՊԵՍԱՂԱՆԱՏՈՒՆ
ԹԵԿՐԱՆ

20.Ն Օգոստոսի 1942 թ.

№ 328

ՊՐՈՓԵՍՈՐ բժպ. Գ. ՄԵԿՐԱՐԵԱՆԻՆ
ԹԵԿՐԱՆ — Շահաբաղ

Սիրելի պրոֆեսոր !

Զեր № 28-ըդ աշխատանքը «ՎԵՆԵՐԱԿԱՆ
ՀԻւանդութիւնները և նրանց դէմ կռւելու հանրա-
մատչել իմիջոցներ»ը, կարդացինք մեծ հետաքրք-
քըրութեամբ, ուսումնասիրեցինք շատ լուրջ, գըր-
ւած է շատ պարզ և բոլորին մատչելի է, մի-
անգամայն օգտակար է ամեն մի անհատի, որի
համար սրտանց շնորհաւորում ենք Զեզ:

Զեզ ի սրտանց յարգող՝
Ս. Մ. Ա. Ֆարուգի

Զինւորական Առողջապահական
մասի կառավարիչ

շող և ուշադրութեան արժանի էր, որ զանազան
երկրներում ժամանակակից իշխանութիւնները,
այդ հիւանդութիւնների առաջն առնելու համար
լուրջ միջոցառումների դիմեցին, սակայն դըք-
բախտաբար նրանց ունեցած պաշտպանողական
միջոցները թերի ու անվտանելի էին, այնպէս
որ չնայած հիւանդութիւնները կանխարգիլելու
բոլոր միջոցներին՝ 1927 թվին կենտրոնական
եւրոպայի ազգաբնակութեան մի քառորդ մասը
դարձեալ որևէ վեներական հիւանդութեան են-
թակայ էր:

Գիտենք, որ վեներական հիւանդութիւննե-
րը մեծ մասամբ առաջ են զալիս անվտանելի
կանանց հետ մերձաւորութիւն ունենալուց: Հե-
տեւաբար ամուսնութիւնից գուրս կատարւող զու-
գաւորութիւններին հսաբաւորութիւն հայթայ-
թող ամեն միջոց նրանց խրախուսող հանդամանք
է. մինչդեռ հակառակը՝ այդ հիւանդութիւննե-
րի նւազելուն նպաստող հանդամանք:

Օրինակ՝ մարզանքը մի լաւ բան է, որ ե-
րիտասարդներին զբաղեցնելով՝ յետ է պահում
ցանկասիրութիւնից: Բարեբախտաբար տեսնում
ենք, որ իրանցի երիտասարդները հին ժամա-
նակներից մարզանքով շահազրգուած են եղել և
մարմնական ֆիզկուլտուրային կարևորութիւն
էին տալիս: Այսօր այդ հակումը Ն. Կ. Մ. Թա-
գաւորի հովանաւորութեան տակ և կրթական
նախարարութեան միջոցով երիտասարդների մէջ

սովորական և ճիշտ ու կանոնաւոր ձեւ է ընդունել: Հետեաբար մարդանքով պարապող երիտասարդները աւելի քիչ են մտածում սեռային պահանջների մասին և կարողանում են ամուսնութիւնից առաջ սեռային մերձաւորութիւնից ձեռնպահ մնալ և իրենց կենսական ոյժերի պահանջնութեան ու մարմնական ոյժերի աղբիւր դառնալ:

Այդ երիտասարդները լաւ ըմբռնել են, որ իրենց կենսական ու երիտասարդական ոյժերը պէտք է պահպանեն մինչև այն օրը, երբ ամուսնանում են իրենց նման առողջ, բարոյական ու բարեխիղճ կենակցի հետ և նրա օգնութեամբ մի յարգելի ու պարկեցա ընտանիք կազմելով պատւառը կերպով հասարակական կեանք սկսեն:

Միւս կողմից՝ գոյութիւն ունի բոլոր հիւանդութիւնների վերաբերմամբ մեր ունեցած տգիտութիւնը. պարձանքի արժանի է, երբ այսօր տեսնում ենք, որ իմաստութեան ու գիտութեան աշխարհաշող արեգակը ծաղել է երկրի բոլոր անկիւններում և գիշերային գպրոցների գոյութիւն առնելը կարողացել է անգրագէտների թիւը պակսեցնել, ուստի ռամիկ դասակարգն այժմ լաւ կերպով գիտէ, որ պոռնիկների հետ մերձաւորութիւնն ոչ միայն վնասակար է, այլև անպատւութեան ու կորստեան մօտենալու միջոց: Այդ օրինակ մարդն արժանի է ամեն տեսակ յանդիմաննութիւնների ու պատիժների: Եւ

պէտք է նման տգեղ ու անպատիւ զործով յանցաւոր եղող անհատը յանդիմանութեան ու պատժի ենթարկւի, որպէսզի հարկադրւած լինի դղջալ:

Որչափ բախտաւորութեան պատճառ է, երբ նկատում ենք, որ երիտասարդներն ամուսնութիւնից առաջ ներկայանում են բժշկին և իրենց ուշադիր քննութիւնն են պահանջում, որպէսզի չլինի թէ երբեկցէ որևէ վարակիչ հիւանդութիւն ունեցած լինեն, և այժմ, ամուսնութեան ժամանակ, իրենց կեանքի ընկերոջ դժբախտութեան պատճառ դառնան:

Միւս կողմից գոյութիւն ունի մի օրէնք, որ ամուսնութիւն չի թոյլատրում վարակիչ հիւանդութիւն ունեցող անհատների հետ:

Գոհունակութեան առիթ է հասարակութեան համար, որ և իւրաքանչիւր երկրի առաջադիմութեան միակ զործօնն է, մեր երկրի հնուաւոր անկիւններում ևս առողջապահական օրէնքներն աստիճանաբար տարածւում են: Այդպիսով անհատները կամաց-կամաց վարակիչ հիւանդութիւնների կարեորութեանն ու վտանգին հետամուտ լինելով ու առողջապահութեան կանոններն ուշադրութեան առնելով, միևնույն ամանից, բաժակից ու զգալից չեն ուտի և վերջապէս հիւանդութիւնների դէմ կպայքարեն:

Այժմ մեր երկրում շատ բժշկական հաստատութիւններ են հիմնել, մի շարք հիմնարկներ ես կառուցւելու վրայ են: Օր չի անցնում,

որ նոր հիւանդանոցի կամ մի բժշկական ուրիշ հիմնարկութեան բացման լուրջ չհասնի նոյնիսկ երկրի հեռաւոր անկիւններից կամ գիւղական շրջաններից:

Ընդհանուրի օգտագործման առարկայ այդ հիմնարկներում ամեն տեսակի հիւանդութիւններ բժշկում են և մինչև անգամ չքաւորներին հընարաւոր չափով զեղօրայք են բաշխւում. վեներական հիւանդութիւնների դէմ պայքարելու կենտրոններից մէկն էլ վեներական հիւանդութիւնների հիմնարկներն են, որտեղ հիմնաւոր բուժումն է կատարւում, հիւանդների կենցաղը խիստ հսկողութեան տակ է առնւում, կատարեալ առողջութիւն ձեռք բերելու համար, վարակումները կանխարգիլում են և յատկապէս այդ տեսակի հիւանդութիւնների բուժման շրջանների վերաբերմամբ խնամութ ուշադրութիւն է ցուցաբերւում:

Այդ հիմնարկներում բոլոր պոռնիկներին ու պատկան մարմինների կողմից կասկածի առարկայ եղող մարդկանց հարկադրաբար խիստ քննութեան են ենթարկում և հարկ եղած դէպքում սկսում են բժշկել նրանց:

Վարակիչ հիւանդութիւնների հաստատութիւնները վարակիչ հիւանդութիւններով տառապող անհատների ամենամտերիմ ու ամենակարեկից բարեկամներն են, որովհետեւ այդ հիմնարկները շատ անկեղծութեամբ ու սրացաւութեամբ են հարկ եղած հրահանգները տալիս եւ

կարելի եղած օժանդակութիւնը հասցնում են հիւանդին, հետեաբար եթէ նման հիւանդութիւն ունեցող մէկը բժշկութիւնից խուսափելու լինի և կամ բուժումը կիսակատար թողնելու վիճի, բժշկական հաստատութիւններն իրաւունք են վերապահում նրանց հարկադրական ձանապարհով հրաւիրելու և հսկողութեան տակ պահելով՝ բժշկելու:

Պէտք է զիտենալ, որ բուժման ենթակայանձը երբէք չի կարող այն վտանգի տակ լինել, ինչ որ իր հիւանդութիւնը թագցնող անձը, որովհետեւ վերջինս, իր հիւանդութիւնը թագցնելու նոլատակով, առողջապահական հրահանգներից խուսափում է և վերջ ի վերջոյ ուրիշների վարակման պատճառ դառնում: Բժշկական հիմնարկութիւնները իրաւունք ունեն դատի ենթարկելու ոչ միայն նրանց, որոնք վարակում են սիֆիլիսով, արիպերով կամ փափուկ շանկը ովով, այլև նրանց, որոնք աջակցում են այդ վտանգին ենթարկելուն:

V Մաս

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ ԿԱՆԽԱՐ-
ԳԻԼԵԼՈՒ ԱՆՀԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Կանխարգիլման անհատական միջոցները,

որոնց մասին ստորև խօսք է լինելու, ամենեւ
ւին չպիտի իբրև վստահութեան առարկայ ծա-
ռայեն, այսինքն մարդն իրեն վասնզի չպիտի
ենթարկի այն վստահութեամբ, որ իրեն փրկող
նախնական միջոցներ կան:

Իրողութիւնն այն է, որ այդ միջոցները
կարող են հիւանդանալու վտանգը պակասեցնել,
այդ հանգամանքի վստահութեամբ՝ ամեն տեսա-
կի տգեղ ընթացքի մէջ դանւելը մեզ առաջնոր-
դելու է դէպի դժբախտութիւն ու զղջում:

Գուցէ հէնց այդ պատճառով աւելորդ էր
այդ միջոցների մասին յիշել այս զրքոյկի մէջ,
այսուամենայնիւ եթէ մէկը վեներական հիւան-
դութիւններով վարակւելու առիթ տւող պատա-
հարի հանդիպելու լինի, որոշ կանխարգիլող մի-
ջոցներով հաւանական է վարակման վտանգը
պակասեցնել—այսինքն՝ կամ խանգարել ման-
ընէի մուտքը սեռանդամի մէջ և կամ սպանել
սեռանդամի մաշկի վրայ տեղակալած մանրէնեւ-
րին:

Առաջին նպատակի համար գործածւում են
գօնդօմ—քափոթներ, որոնք զուգաւորութեան
ժամանակ քաշում են առնանդամի վրայ. դըժ-
բախտաբար այդ միջոցը չի կարողանում վա-
րակման վտանգը վերացնել, որովհետեւ նախ՝ կա-
րող է պատռել և երկրորդ՝ քափոթը ծածկում
է միմիւյն առնանդամը, մինչզեռ սիֆիլիսի վա-
րակը կարող է այլ մարմնամասերում ևս գոյու-

թիւն ունենալ և շփման հետեւանքով վարակել:

Մորթի կամ հուզաթաղանթի վրայ տեղ բռնած մանրէներին ոչնչացնելու համար կիրառաւած միջոցները պէտք է գործադրել անմիջապէս կամ ամենառաջը զուգաւորութիւնից 1—2 ժամ յետու:

Այս ապօրինի խառնակեցութիւնից առաջանալիք վտանգները գիտակցելով հանդերձ՝ եթէ մէկը կուրօրէն կամ խելագարօրէն մոլութեան մէջ ընկնի, կարող է վեներական հիւանդութիւնների վարակումը կանխելու համար օգտւել այն բուժարաններից, որոնք օր ու գիշեր բաց են: Կամ ինքը կարող է գործադրել հետեւալ միջոցները:

ՏՀԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

1— Զուգաւորութիւնից անմիջապէս յետոյ միզել:

2— Առնանդամն ու շրջապատը գաղջ ջրով ու օճառով խնամքով լւանալ: Հականնեխական օճառը գերադասելի է:

3— *Oxyuridol* կոչւած դեղը, որ դեղատներում վաճառւում է առանց դեղատումսի, մուծել միզանցքի մէջ: Գործածութեան ձեի հրահանգը կցւած է դեղին:

Պէտք է գիտենալ, որ *oxyuridole*-ը կանխարգիլող միակ դեղը չէ: Նրա փոխարէն կարելի է

գործածել prophilactol կամ samariter կաթիւները, Կայ նաև փոքրիկ սրւակների մէջ պարփակւած protargol glisseryn-ը, ինչպէս նաև առաօԵլ փոքրիկ հատիկներ, որոնք հալւելով, տարածւում են միզանցքի մէջ:

Այդ դեղերը ծախւում են փոքրիկ փաթեթների մէջ, որոնք սովորաբար տոգորւած են իւղերով, ինչպէս քալումելի իւղ. նրանք հակասիփիլիսային երեսյթ ունեն:

4 — Oxyviridol կոչւած դեղով պիտի լաւ օծել առնանդամի մորթն ու շրջապատը:

5 — Առնանդամը փաթաթել մոմլաթով կամ մոմաթղթով:

6 — Ներքնաշաղպիկն ու անդրավարտիկը փոխել:

ԿՍՆԱՆՅ ՀԱՄԱՐ

1 — Մերձաւորութիւնից անմիջապէս յետոյ միզել:

2 — Խնամքով դաղձ ջրով ու օճառով լւանալ դրսի կողմից ամբողջ սեռանդամը:

3 — Սեռանդամի ներքին մասը պերմանդանաթիթոյլ լուծծոյթով լւանալ:

4 — Սեռանդամի արտաքին մասերի, ազդրերի ու փորի մորթն օծել oxyviridol-ով:

5 — Եոյն դեղից, որ յատկապէս այդ նպատակի համար ծախւում է դեղատներում, ներ-

մուծել սեռանդամի անցքի մէջ:

6— Ներքնաշապիկն ու վարտիկը փոխել:

7— Սեռանդամը խցւած պահել, ինչպէս
արւում է դաշտանի ժամանակ:

Մի անգամ ևս կրկնում ենք չպիտի են-
թագրել, որ այս բոլոր միջոցառումները բացար-
ձակ անվարակութիւն են առաջացնում, բայց
յամենայն դէպս նրանք օգտակար են:

Այս ամենն ինչ որ առւեց այստեղ, պար-
զում են, որ բոլոր վեներական հիւանդութիւն-
ներն ունեն յատուկ մանրէներ, որոնք անպայ-
ման մեր իմացած ճանապարհներից մէկով վա-
րակում են առաջացրել հետեարար խելացի ու
գիտակից մարդը երբէք իրեն թոյլ չի տալիս իր
վարակումը վերագրել զանազան անտրամաբա-
նական բաների - ինչպէս՝ օրինակ միզկատապը
ներկայացնել իբրև արդիւնք խոնաւութեան կամ
երազափորձութեան:

Յամենայն դէպս՝ հիւանդութիւն ունեցած
կամ ունեցող մի անձի հետ մերձաւորութիւն
ունենալուց յետոյ, կամ ախտանիշերի երեան
գալուն պէս՝ անյառաղ պիտի դիմել բժշկի, որ-
պէսզի նա կարողանայ հարկ եղած միջոցներն
անմիջապէս կիրառել:

Սակայն պէտք է գիտենալ, որ ամենալաւ,
ամենաբնական, ամենակատարեալ, ամենավտա-
հելի կանխարգիլող միջոցն է պատահական ու
կատկածելի սեռային մերձաւորութիւնից խու-

սափել:

Իհարկէ առողջապահական մարմինների կողմից ևս վարակումը կանխարգիրելու և նման հիւանդութիւնների դէմ պայքարելու համար հարկ եղած որոշումները կիրառուում են:

Մենք որոշ չափով ծանօթացրինք ընթերցողին վեներական հիւանդութիւնների էութեան և նրանց ծագման պատճառների ու նրանց տեսակների ընթացքի հետ:

Եթէ հասարակական շահերը ի նկատի առնելու լինենք, կտեսնենք, որ իւրաքանչիւր մարդու հասարակական ու խղճի պարտականութիւնն է հայրենիքի առաջադիմութեան համար ճիգեր գործադրելու Որպէսզի այդ նպատակն իւրականանայ՝ իւրաքանչիւր անհատ պարտաւոր է իր աշխատունակութիւնը պահպանելու համար ջանքեր գործադրել և ոչ թէ թոյլ տալ, որ իր այդ ունակութիւնն աւելի վչանայ ու անօգուտ դառնայ:

Այդ պատճառով նա պարտաւոր է երբէք մերձաւորութիւն չունենալ պոռնիկների հետ:

Պատահական ու կասկածելի զուգաւորութիւններից խուսափել:

Ոգելից խմիչքներ չխմել:

Իր մաքի մակերեսոյթն ու կրթական կշիռը օրըստօրէ բարձրացնել:

Իր հիւանդ լինելը չթագցնել այն անձերից,

որոնց հետ մշտական և ուղղակի յարաբերութեան, մէջ է:

Բժշկութեան նպատակով սովորական մարդկանց չդիմել:

Կանոնաւորապէս յաճախել բժշկի մօտ եւ մեծ ուշադրութեամբ կատարել նրա տւած բոլոր բժշկական հրահանգները:

Վստահ լինել, որ վեներական հիւանդութիւնները բուժելի են և երբէք չյուսահատել:

Հաւաստի լինել, որ իւրաքանչիւր անհատ ինքն է իր մարմարական վիճակի և նրա տռող ջութեան միակ պատասխանատուն:



ՊՐՈՓԵՍՈՐ ԲՓՋԿԱՊԵՏ Գ. ՄԵՀՐՄԵԵՎՆԻ
ՑԱՐԴ ՏՊԱԳՐԻԱԾ ԵՒ ՍՊԱՌԻԱԾ
ԱՇԽԱՏԱԽԹԻԿՆՆԵՐԸ

1. *Meningitis tuberculosa գերմանիերէն, Բերլին, 1907թ.*
2. Туберкулез кишеч как первичное заболевание *ոռւսերէն, Լենինգրադ, 1908թ.*
3. Венерическая болезни и меры для борьбы с ним *ոռւսերէն, Մոսկվա, 1909թ.*
4. Противотуберкулезный съезд в Москве rapport проф. Меграбьяна *ուս. Մոսկվա, 1910թ.*
5. Туберкулез и общедоступные меры для борьбы с ним *ոռւսերէն, Մոսկվա, 1910թ.*
6. Комбинированный способ лечения легких ультра и X лучами *ոռւս. Մոսկվա, 1911թ.*
7. Միֆիլիսն իբրև ժողովրդական մեծ դժբախտութիւն. հայերէն, Տփխիս, 1912թ.
8. Մալարիա և նրա դէմ կուելու հանրամատչելի միջոցներ. հայերէն, Տփխիս, 1913թ.
9. Հիւանդութիւնների նախականիումը գիւղում. հայերէն, Ախալցխա, 1914թ.
10. Տուբերկուլեօզ և նրա դէմ կուելու հանրայատչելի միջոցներ. վրաց. Տփխիս, 1915թ.
11. Խօլերան և նրա դէմ կուելու միջոցներ. հայերէն, Տփխիս, 1916թ.
12. Բնակարանը և մտաւոր աշխատանքը. հայերէն, Տփխիս, 1917թ.
13. Ժանտախտը և նրա դէմ կուելու միջոցները. հայերէն, Տփխիս, 1918թ.

14. К вопросу о благоприятных исходах туберкулезного менингита. *Լենինգրադ*, 1919թ.
15. Գիշերւայ հանգիստը. հայ., *Տփխիս*, 1920 թ.
16. Տուբերկուլեօվի բժշկման զուգախառն եղանակը անդրմանուշակուգոյն և X ճառագայթներով. հայերէն, *Տփխիս*, 1921 թ.
17. Лечение рентгеновскими лучами легочного туберкулеза *ոռուսերէն*, *Լենինգրադ*, 1923 թ.
18. Борьба с туберкулезом при посредстве школы *ոռուսերէն*, *Տփխիս*, 1925 թ.
19. Լւացարարների պրոֆեսիոնալ հիւանդութիւնները. հայերէն, *Տփխիս*, 1926 թ.
20. О лечении туберкулеза легких на высоких горах *ոռուսերէն*, *Տփխիս*, 1927 թ.
21. Պրոֆեսիոնալ թունաւորումը ֆուֆորով. հայերէն, *Տփխիս*, 1927 թ.
22. Меры для борьбы с народными болезнями путем открытия выставок *ոռուսերէն*, *Արհնոգրադ*, 1928 թ.
23. *Rapport au congrès International des Radiologistes à Paris en 1931* ֆրանսերէն, *Փարիզ*, 1932 թ.
24. Տուբերկուլեօվ և նրա դէմ կուելու հանրամատչելի միջոցներ հայերէն, *Նոր-Զուղարք*, 1936 թ.
25. պարսկ. թեհրան, 1937 թ.
26. وبا و مهلتون وسیله برای جلوگیری از آن պաرسکلرէն, 1938 թ.
27. یهادجهای ذهروی و جلوگیری از آنها պرس. » 1940 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0009947

ЦЕНА

16775

ԳԻՆՈՒ Է 30 ԹԻՎԻ.

Սատանակու համար զիմել Թեհրանի հայ զի
վաճառահացները կամ հեղինակին՝ Թեհրան, Շ.
Հաբադ, քուչելի Մէյդ Հաշէմ (Հեռախոս 98—1)